արժանի արժեքների, որոնք ստեղծվել են հենց այդ տարիներին: Բացի դրանից, նրա նկատած հակադրությունը ավելի շուտ հոետորական իմաստ ունի. դա քննադատության մեջ ընդունված եղանակ էր, երբ այս կամ այն երևույթի նշանակությունը ավելի ցայտուն ընդգծելու համար իջեցվում է ընդհանուր ֆոնը: Բանախոսի դիտողությունները մի այլ իմաստ էլ ունեին. օգտվելով առիթից՝ նա պարզում էր կնոջ թեմայի մեկնաբանության այն նոր տեսանկյունը, որ արդեն ստեղծագործաբար վավերացվել էր «հեթանոսական» ուղղության մեջ:

Այս ամենով հանդերձ, Վարուժանի դիտողությունները մի որոշ ենթատեքստով իրոք պետք է բացարձակ ընդունել: Խոսքը վերաբերում է գրական չափանիշների իջեցման, թեմաների մանրացման, իդեալների աղճատման այն երևույթին, որ արևմտահայ գրական կյանքում գոյություն ուներ Սիամանթոյից առաջ, կար նաև այն օրերին, երբ Վարուժանը կարդում էր իր բանախոսությունը:

Այնուհետև ներկայացնելով Սիամանթոյի բանաստեղծական շարքերի բովանդակությունը, դրանց ներքին կապը՝ Վարուժանը փորձում է գտնել այն հիմնական որոշիչները, որոնք բնութագրում են բանաստեղծի վաստակը՝ որպես միասնական համակարգ:

Ամենից առաջ պայմանական է համարում Սիամանթոյին դյուցազներգակ բնութագրումը, քանի որ «հին դյուցազունների համար կռիվը իրավունք մըն էր, գրեթե արհեստ մը, կը կիրարկեին զայն իրենց ուզած ժամանակ», մինչդեռ «Յարճանյանի հերոսները հեղափոխականներ են կամ առաքյալներ», որոնց համար կռիվը իրավունք չէ, այլ պարտականություն՝ պարտադրված հայրենիքից ու ժամանակից:

Սիամանթոյի բանաստեղծական անհատականության երկրորդ կարևոր հատկանիշը համարում է երևակայությունը: Բայց՝ «երևակայությանը միացած գաղափարականը հոետորություն կը ծնի, երևակայությանը միացած զգացումը կը ծնի վսեմը: Յարճանյանի արվեստը արդյունք է այս զուգավորումներում»: Այսինքն՝ «Սիամանթոն գաղափարախոս բանաստեղծ է կամ բանաստեղծ գաղափարախոս, ...ան հզոր երևակայության մը կատարն է՝ թևավորված փոքրիկ հուզումով մը, այդ թելադրիչ հուզումը կարոտախտն է: Կիկլոպ մըն է քերթողը, այն սարսափելի աչքը՝ զոր Աստված իր լուսեղեն մատով բացած է ըղեղին վրա,